№ VIII—IX ՄՈՒՇԱԿ 1887

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԻՄ ՍՏԱՑԱԾ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Պ. ԲԱՖՖՈՒ «ԿԱՑԾԵՐԻ» ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՑ

1.

«Կայծերն» երկրորդ հատորը կարդացուում է մեծ սիրով:

Երբ որ մի գիրք կարդացողի հետաքրքրութիւնը շարժում է և հետզհետէ յառաջ է տանում, յառաջ է մղում, այդ գրաւչութիւնը գրքի արժանաւորութիւններից մէկին է և պատիւ է բերում գրողի ճեմիւ, սահուն և աշխոյժ գրչին: Այս տեսակ գրքերից ժողովուրդը կարող է ընթերցասիրութիւն ստանալ, վարժ կարդալ սովորել, իսկ նորահաս գրողները՝ ճեմիւ գրելու ձև ու ոճ: Կըմնայ որ այս սահուն ոճով գրուածքն նիւթն էլ լինի բարոյախրատական, զարգացուցիչ, գիւրամարս և՛ անընդարար, մի խօսքս որ և ամեն մարդու անհրաժեշտ գիտենալու բան: Կայծերն ունին և այս երկրորդ արժանաւորութիւնը, վասն զի նրա բովանդակութիւնն է ըստ մեծի մասին Հայրենիքի կենդանագրութիւնը, որ այնքան գեղեցիկ և քնքոյշ ներկերով է նկարուած: Ընթերցողը կարծես աչքովը տեսնում է իւր Հայրենիքի գմայլելի վայրերը և հիանում, սքանչանում, հետևաբէս նաև սիրում, և այցելելու միտք ու բաղձանք յղանում...

Ցիրաւի, ինչքան ցանկալի բան է, որ ամեն ոք ծանօթ լինի իւր Հայրենիքին, գիտենայ, թէ նրա ո՛ր անկիւնում ինչ կայ, ինչ սար, ինչ ձոր, ինչ դաշտ, ինչ գետ, ինչ օդ, ինչ բերք, ինչ հնութիւն կամ նորութիւն, ինչպէս են ապրում իւր հայրենակիցները, ինչ գործ են, ինչ վիճակի մէջ...

Ամբողջ գիրքը մի ուղեւորութիւն է, մի ուղեւորութիւն ուսումնագնացութեան պէս կամ սար գնալու նման: Եթէ ընթերցողը՝ կամ ասել ուղեւորը, մի քնքոյշ էակ է, կարող է չվախենալ մի այսպիսի ճանապարհորդութիւնից, մանաւանդ որ ճանապարհորդութիւնն ամառն է կատարվում: Ոչ բուք, ոչ ձիւն, ոչ որոտմունք, ոչ կայծակ ու կարկուտ. թէպէտ վատ չէր լինիլ, եթէ սրանք ամենն էլ լինէին, վատ չէր լինիլ, եթէ Հայաստանի լեռներն իրանց արձագանգ տալու ահեղ ուժը յոյժ ատլին, ձորերն իրանց յորդահոս հեղեղը, սարերն իրանց բուքն ու բօրանը, և այլն. ոչ, այստեսակ և

ոչ մի բան չկայ. ընդհակառակն ամենքն էլ ուրախ են, ամենքն էլ զուարթ, որովհետև հունձի ու կալի ժամանակ է, գնչուացին ժողովում է իւր տասեկան աշխատանքի պտուղը, բոլոր այգինները ծխում են նորահաս և խաթամ մըրգերով—խաղող, դիղձ, խուզ, անուշահոտ և շաքարահամ տանձ ու խնձոր... Բոստաններըը լիքն են սեխով ու ձմերուկով։ Մէկ խօսքով՝ ինչ սիրարդ ուզի, ամեն բան կըճարես. չոգելու չկնիս, մուրդ մի ստուերախնամ ուռենի կըգտնես. ծարուելու լինիս, մի գովարար ոգբիւր, և այսպիսով ամառուան մի քանի ամիսներում կարող ես քեզ Եդեմական դրախտումը հրա ակայել. չէ որ հէնց դրախտն ինքը մեր Հայրենիքումն է եղել մի ժամանակ, որ չետոյ իւր տէրը բուն Հայրենիքին տալով՝ ինքը վերացել է ի վերինն Երուսաղէմ...

Այս եդեմական տպաւորութիւններն ստանալուցս չետոյ՝ սրտիցս ակամայ գուրս վազեցին պ. Սմիբճանեանի սրտաշարժ երգի հետևեալ տողերը.

Թող, ախպէր, Թող, որ իմ սիրտ
Կրակ ու բոց վառուած էլնի.
Թող՝ իմ աչք կլկլայող
Պղտոր պղտոր ախպիւր էլնի.
Թէ տիւն էլ արտասունք ունիս,
Արի ծիկ հետ ու լայ արա.
Մեր արտասունք Թող ամպ կորի,
Հայոց դաշտեր անձրեւ էլնի.
Արի, ջան ախպէր, արի,
Սիրտդ մ'անէր քիարի նման,
Թէ կըսիրես քեօ Քրիստոս,
Քեօ պապերու սուրբ կերեզման,
Ու զրմէն դարիպ-կուրսաթ,
Հայու տղէք հաւասարական,
Եկէք տանք մեր քրտինքներ,
Մեր ցաւ ու դարդ կալմի պերան,
Հիսապենք, փայ մեզ, ասենք,
Մեր սիրտը փխրին, աչք կլկլան,
Մեր արտասունք ամպ Թող դառնան,
Հայոց դաշտին վերէն խաղան...

Թո՛ղ, ախպէր, Թո՛ղ, որ իմ սիրտ
Կրակ ու բոց վառուած էլնի
Թող՝ իմ աչք կլկլայող
Պղտոր պղտոր ախպիւր էլնի...

2.

Կայծերի մէջ տեղագրական նկարագրութիւնները այնքան զեղեցիկ են, որ չեն Թուեցնում մեզ, Թէ մի բան պակաս է։ Նէ պակաս է ժողովրդի բուն կենդանագրութիւնը իւր բոլոր տառապանքներով։ Այս մասը շատ ազօտ վրձինով է նկարած և այս բոլորովին ներելի է հեղինակին՝ մեզ շատ ու շատ հասկանալի պատճառով։

Բայց բնաւ ներելի չեն այն Թերութիւնները, որոնք վերաբերում են Կայծերի հերոսներին — Ասլանին, Կաթոյին, Մուրադին և քաւոր Պետրոսին։ Վերջին երկուսը խաչագողներ են, իսկ առաջին երկուսը՝ իմաստակներ, եթէ չասենք չառլատաններ։ Հեղինակի աչքին չեն երևում ոչ նրանց խաչագողութիւնը և ոչ նրանց չառլատանութիւնը. ընդհակառակն՝ նա ձգնում է ապացուցանել, որ նրանք մէկ-մէկ երգել են։ Այս Թերութիւնը հեղինակի կողմից չառաջ է եկել նրանից, որ նա ամեն տեղ և ամեն բանի մէջ խաչագողութիւն է տեսնում, և այն մարդիկներին է գործող անձն շինում, որոնք, ըստ Կայծերի, «խաչագողի նման հարուստ ընդունակութիւններ ունին»։ Ահա Թէ ինչ են ասում նրա խօսող անձինքը, Կայծերի 457 երեսում։

«Ես տեսնում էլի, — ասում է Ջարհատը քաւոր Պետրոսի առաջով—որ գարշելի խաչագողի անգամ կարող է ուղղվել, կարող է մաքրվել իր հին կեղտերից և ծառայել մի բարի գործի։ «Ովքե՞ր էնինք մենք»— ասում է ոդեվից Մուրադը։— «Մենք մի հասարա-

կուշիւն կ՚ենք։ Մեր մէջ կիրարկուած էր մի ամբողջ ժողովուրդ իր անբարոյական սովորոյթ»... Պատնէշ կարկառուեցաւ, չնայ կարկառուելը կասկած էին։ Մինչեւ սալմասցիները կամ սուրբեցին է միայն խաչագողը։ Խաչագող կարող է լինել և մի քահանայ, և մի արհեստաւոր, և մի վաճառական, և մի վարժապետ, և մի ասպիճանաւոր. մի խօսքով ամեն մարդ, որ խաչագողի յատկութիւնները ունի։— Խաչագող կարող է լինել և մի ամբողջ ազգ, որը «խաչագողի նման հարստ ընդունակութիւններ ունի», բայց իւր ընդունակութիւնները գործ է դնում դէպի վատը, դէպի անազնիւը և դէպի անբարոյականը»...

Մենք չենք վերաւորւում այս կոպտնակի հայհոյանքից, որովհետև հայհոյողը, որ է Յարհատը, մի լմոսսակ է, որ դեռ ևս ոչ մի հասկացողութիւն չունի ոչ «ընդունակութիւն», և ոչ «սրբութիւն» բառերի գաղափարի մասին։ Բայց որ յարգելի հեղինակը ձգնում է ապացուցանել Յարհատի ասածը՝ սրբացնելով քաւօր Պետրոսին, տեսնենք որքանն է հասել նա իւր այս նպատակին։ Ի՞նչ. գործ է կամ ինչ է չինում քաւօր Պետրոսը կայծերում։—Նա այժմ ըստ ձևոյն քրդացել է, դառել է քրդի ձգնաւոր։ Նրանց համար գուշակութիւնները է անում և սրա համար էլ քրդերը նրան պաշտում են։ Որ նրա այս գործը մի սուրբ գործ է, այդ ապացուցանում են քաւօր Պետրոսի սանիկ՝ միւս խաչագող — Մուրադը և հերոսների գլխաւորը՝ Ասլանը՝ հետևեալ խօսակցութեամբ։

—Մուրադ, սիրելի զաւակս,— խօսեց Ծերունին (խաչագող քաւօր Պետրոսը), դու դարձեալ գերեզման ես լինձ մի պատարագիչի դերի մէջ և երաւունք ունիս մերժելու, որ հին խաչագողը, հին չարագործը տակաւին չէ ուղղվել... Ա՜խ, եթէ գիտենայիր, թէ քանի հանգամանքներ հարկադրեցին լինձ այդ (այս) ամօթալի ճարպաւանքը չանձն առնել, դու կընեղէիր լինձ, դու բարի ես, Մուրադ, դու կընեղէիր լինձ...

—Եւ կընեղէի ձեզ, աւելացրեց Ասլանը։

—Այո՛, կընեղէի ձեզ... և սիրում եմ... (ասում է միւս խաչագող Մուրադը) ես այժմ հասկանում եմ բոլորը... ամեն լինչ պարզ է լինձ համար... Ոչինչ բարեգործութիւն չէը կարող մոռանալ տալ քո տուր անցեալը... Ոչինչ ապաշխարութիւն չէը կարող քաւել քո հին մեղքերը... Իսկ այժմ բոլորը պէտք է սրբած հանարել... Այդ անձնազոհութիւնը, որ դու յանձն ես առել մի մեծ նպատակի համար, կրմաքրէ քո հին յանցանքները...»

Այսպէս ահա յարգելի հեղինակը ամենայն տեսակ խորգաստութեան մէջ նեղած ու վտանգ քաւօր Պետրոսին ազատել է աքսորանքից և կայծերի մէջ մի նոր տեսակ խորդաստութեան մէջ գըրել և գլանով սրբել նրա անցեալ, ներկայ և ապագայ մեղքերը։

Եւ այս՝ կայծերի խօսքով, կը նշանակէ «...Մերկանալ հին մարդը և, երբև նոր մարդ, նոր հագուով և նոր եռանդով գործել գէպի ազնիւը և դէպի լաւը»..

Ի՞նչ մարդ է Կարօն, և ինչո՞վ է բարձր քաւօր Պետրոսից։ Կարօն մի երգեալ է, և այն վարժապետի երգեալ։ Նա մի ուժեղ հըսկայ է, քաջ դինուոր է, նշանաւոր մարտիկ է, երևելի լուզորդ է, հմուտ երկրագործ է, ժիր տնտեսագէտ է, բժշկութիւն էլ է անում, անասնաբոյժ էլ է. նա բոլոր այս բաներով պարապում է և սովորեցնում է, ոչ թէ մի գիւ-

ղում, այլ մի քանի գիւղերում միանգամայն։ Ծառայում է անվարձ. մահկանալ ունի, վրան չի պառկում. մահճէ ունի, գործ չի անում. պառկում է մերկ յատակի վրայ, առանց անկողնի. չատ անգամ կողքերի տակին մանը խոչոր է անում, որ աւելի ցաւեցնէ։ Ձմեռը վառարանը չի վառում, պատուհանները չի փակում։ Իսկ այնտեղ ձմեռը շատ խիստ է։ Շատ անգամ մի քանի օրով քաղցած է մնում, ոչ ուտում է և ոչ խմում, միայն ծխում է, բայց երբէք ուժից չի ընկնում։ Իսկ երբ սկսում է ուտել, հինգ մարդու չափ ուտում է, մինն էլ հում է ուտում, կաթի պէս ոչխարը արիւն է խմում։ Այս բոլորի պատճառները բացատրուած են և կիմանաք, եթէ կարդաք Կայծերի 536 երեսից սկսած «Գիւղական վարժապետը»։ Գիւղացիք նրա տրհավին են երդվում, առանց նրան հաց չեն ուտում։ Մանաւանդ աչքերն ու ունքը նրան շատ են սիրում։ Նրա չնորհիւ այն գիւղերը, ուր նա վարժապետ է, գառել են մի-մի կատարեալ դրախտ։ Կարդացէք և կըտեսնէք, թէ ինչպէս է եղել այդ։ Ըստ ամենայնի կատարեալ Կաբօն երկու բիծ ունի միայն։ Բիծերից մէկն այն է, որ Կաբօն սպանել է իւր մտերիմ ընկերներից մէկին՝ Ռափայէլին, բոլոր հերոսների մէջ միակ պատուական մարդուն։ Երկրորդ բիծն էլ այն է, որ այդ դասախարակի նդէալ Կաբօի միակ գաւակը՝ Հերբերին՝ Թաւիսառում է անբարոյական վհուկների և գնչուների մէջ, նրա բարոյակրթութեան վրայ ոչինչ հոգ չի տանում։ Կաբօի նկարէնը, ալ. Բաֆֆին՝ ազատ էր խոզից մարդ շինել, և շինել է, բայց եթէ մեր Գրիգորը Տրդատի միայն մի անկանոնը Թոզել խոզի, ալ. Բաֆֆին Կաբօի երկու ականջը միասին է Թոզել, որով իւր քաշած պատիժը երկու աչքը միանգամից է հատացրել։ Սահեղոզը գիտէ միայն այսպէս պատժել բոլոր այն ստեղծակներին, որոնք կարգի դուրս բան են ուզում ներկայացնել — ուզում են այնպիսի մարդ ստեղծել, որպիսին Արարիչն Ինքն ստեղծած չէ։

Մեր ժամանակում, երբ մի բժիշկ ամեն ցաւի դեղ է անում, նրան բոլոր չափաւոր մարդիկը անուանում են անբարեխիղճ բժիշկ, իսկ աւելի խիստ սահանջող մարդիկ, գործն քաղաքամոտ մարդիկը այդպիսի բժիշկներին անուանում են «չարլատան»։ Այսպէս են և այն վիպասաններըը, որոնք պատրաստում են ամենայն տեսակ գործ, և այն վարժապետները, որոնք առանդում են մի բարձր դպրոցում կրթութեան բոլոր առարկաները։ Այժմ ինչ անուն պէտք է տանք Կաբօին, եթէ ոչ «խաչագողի հարուստ ընդունակութիւն ունեցող» մի դասախարակ, որին ի նկատի առած, Ֆահրատը կարող է ասել. «Խաչագող կարող է լինել և մի վարժապետ, որ Կաբօի նման մեծ ամենից ամեն բան է, բայց իսկապէս և ոչ մի բան չէ...

Գուցէ Ասլանն է մի օրինաւոր մարդ։ Ասլանն ամենից շատ ունի «խաչագողի հարուստ ընդունակութիւններից»։ Նա ամենից ծանկամիտն է, ամենից խորամանկը, ամենից խօրհրդաւորը։ Ասլանն իսկապէս սիտն է այն տեսակ մարդու, որ մի աննշան տեղեկութիւն հաղորդելիս՝ իւր դէմքին գանազան ծամածռութիւններ է տալիս,—ձայնը ցածրացնում, աչքերը չռում, գլուխը թեքում դէպի լսողն ականջը և գանազան կիսատ պռատ բացատրութեամբ և ստորատութեամբ ուզում է հասկացրած լինել որ իւր ասածի մէջ

մի խորհրդաւոր միաք կայ, մի վտանգաւոր գաղտնիք կայ Թագնուած, Թէ՝ հարկաւոր է անպայման հաւատալ նրան, որովհետև Թէկուզ ապացոյցները շատ ուժեղ, բայց կարող չէ ասել... Ով է արգելում արդեօք Աստանին, որ իւր ուզածի չափ Թափուէ ուր կամենում է, որ իւր նկատողութիւնները գրի առնէ, իւր դատողութիւնը յայտնէ. Նամակ գրէ և ստանայ առանց Էլիբրեի օձադուրս գաղտնի օգնութեանը դիմելու, առանց Ծպտելու, և այլն: Այն վոդերը, որ այնքան առատ առատ Ծախսում է Աստանը, «խաչագողի հարուստ բնդունակութեամբ» Ձեռք բերուած վոդերը են, իրը այն մարդոյ, որ մի մեծ բան պիտի չլինի իւր հայրենիքում, բայց ոչինչ չի չինում և ինչ որ չինում է, այդ մի Հանճարեղորդութիւն է և այն չատ հասարակ և անմեղ Հանճարեղորդութիւն, որ արգելած չէ անել ոչ ոքի. իսկ այն տեղեկութիւնները որ նա հաւաքում է և իւր գիտցածով լուսաբանում, այդ կարող է անել նրանից հազարապատիկ լաւ Բաֆֆու նման մի գրող իւր սենեակումը նստած, որովհետև ուրիշ կերպ կարելի էլ չէ. մարդ պէտք է շրջապատած լինի երեն տեղագրական և պատմական գրքերով, որ կարողանայ Հիշա Թուերով և տեղով ասել այն, ինչ որ ասում է Աստանը, և այս պատՀառով էլ, պ. Բաֆֆին աւելի քիչ Ծախքով, մի սոսկ տպագրութեան Ծախքով միայն կարող էր այդ բոլորը Աստանից լաւ ամփոփել մի գրքի մէջ: Այն խորհրդաւորութիւնը, որ հեղինակը տուել է Աստանին, դա մի խելոհատուկութիւն է և ուրիշ ոչինչ: Աստանով վերջանում է Կայծերի առաջին հատորը, նոյն Աստանով վերջանում է և Կայծերի երկրորդ հատորը: Առաջինի վերջում նա գնում է Վան, երկրորդի վերջում՝ Հնդկաստան: Բարի Ճանապարհ:

Կայծերի վերջին գլխում «Համբ» անունով մի գիտնական մարդ կայ, և հարկէ չատ խորհրդաւոր: Պէտք է կարդալ միայն և տեսնել: «Նա լաւ բնագէտ է և մաթեմատիկոս»: Նա միևնոյն ժամանակ բանաստեղծ-վիպասան է: Այս գիտնական անձը, այս բնագէտ - մաթեմատիկոս և բանաստեղծ-վիպասանը այնպիսի անհեթեթ և սուտ ու սխալ գատողութիւն է տալիս Թէ գիտութեան և Թէ բանաստեղծութեան մասին, որ կամայ ակամայ գալիս ես այն եզրակացութեան, որ նա մի կատաբեալ լմտասուկ է: Բայց Թողնենք, որ Կայծերի հերոսները խօսին:

—Ա.ամէ նա ինչով էր պարապում (պարապում), հարցնում է Աստանին Յարհատը Համբի մասին.

—Նա պարապում էր (պարապում էր) գիտութեամբ, — պատասխանում է Աստանը:—Նա լաւ բնագէտ է և մաթեմատիկոս: Բայց չեմայ Թողնց գիտութիւնը:

—Ինչու Թողնց:

—Նրա կարծիքով, մենք, հայերս այնքան փոքր Թուով պատրաստի մարդիկ ունինք, որ մենք պէտք է խնայենք մեր ուժերը աւելի կարևոր պահանջների համար: Եւրոպացում հազարաւոր մարդիկ զբաղուած են գիտութիւնով, նոր հետազոտութիւններ են անում, նոր գիտութ են անում, և իւրաքանչիւր գիտութիւնը հարստանում է բազմաթիւ նոր հրատարակութիւններով: Մենք կարող ենք նրանց պատրաստած գրքերը Թարգմանել կամ փոխադրել մեր լեզուով: Գիտութիւնը ամեն ազգի համար նոյն է մնում: Բայց կայ մի բան, որ Եւրոպան չէ կարող մեզ տալ,

որը մենք լինքներս պէտք է ստեղծենք։

— Ի՞նչ բան է այդ, հարցրի ես (Ֆարհատը հետաքրքրութեամբ։

—Ազգային բանաստեղծութիւնը, որ ամեն ազգ ինքը պէտք է ստեղծէ... Համրը լռուեց գիտութիւնը և սկսեց բանաստեղծութեամբ պարապվել, (պարապել)։ Նա բնական տաղանդ ունէր և թեթև, սահուն լեզու։ Գրում էր ոտանաւորները, գրում էր զանազան պատկերները, գրում էր և վէպեր։ Նրա աշխատութիւններից մի քանիսը տպուեցան և հարդարվում էին մեծ ախորժանօք, բայց չատերը անտիպ մնացին .. Մենք զրկուեցանք մի բանաստեղծ-վիպասանի ամենագեղեցիկ վաստակներից ...»

Ուրեմն ամեն ոք, եթէ ուզենայ, կարող է բանաստեղծ-վիպասան դառնալ, հարկէ միայն գիտութիւնից հրաժարվելու։ Էլ ո՞ւր ենք գիտութիւնը կրթուեան, մտաւոր զարգացման առաքելոյ չենում գաստիարակութեան գործում։ Էլ ինչո՞ւ ենք մեզ ստրկում այս և այն բանասիրին, որ բնութեան հաստատակ երևոյթները ծուռ է բացատրում, կամ բնաւ չի հասկանում։ Էլ ինչո՞ւ պիտի պահաստվինն հաւատարենք, եթէ Ասլանն պէս բժիշկ Հանճարհօրգը չի հետաքրքրվում Հայաստանի բազմազան ծաղիկներով, բոյսերով, հանքերով և այլն, այլ ամբողջ ընութիւնը նրա համար մի մուշ աշխարհ է, մինչ դեռ ամենահաստատակ մի ջրատն անգամ պիտի չարժէր նրա հետաքրքրութիւնը։ Ֆարհատը այդ տեսակ մեծարոյն առաջնորդութեամբ միայն իմաստակ կարող է դառնալ։

Մի՛կ տեսնենք բժշկապետ Ասլանն ինքը որպիսի հայեացք ունի գիտութեան և բանաստեղծութեան վրայ։

—Իրաւ է, (ասում է բժշկապետ Ասլանը) բանաստեղծութիւնը և առհասարակ բոլոր գեղարուեստական գրուածները՝ ազգի թէ ոգևորողը և թէ «դեկադարողը», պէտք է լինեն։ Գիտութիւնը չոր ու դամար սնունդ է տալիս մարդկանց մտքերին, բայց բանաստեղծութիւնը կենդանացուցիչ սնունդ է տալիս նրանց սրտերին, հոգուն, երևակայութեանը։ Բանաստեղծը, ստեղծում է ժողովրդի համար իդէալներ, — բարձր, հանրամարդկային իդէալներ։ Եթէ նեղկայն մէջ չէ գտնում իւր իդէալների տիպարները, նա մտնում է պատմութեան խորքը, և ժամանակների հնութիւնից դուրս է հանում իւր ցանկացած հերոսներին և նրանց պատկերները, նրանց վսեմ գործերի նկարագրութեամբ գնում է նեղկայ սերնդի առջև, որ նրանցից օրինակ առնեն և նրանց նման լինեն։ Նա ստեղծում է և այնպիսի տիպարներ, որոնք նեղկայի մէջ դեռ ծնուած չէին, այլ ապագայում պիտի յայտնվէին։ Նրա սուր աչքերը տեսնում են նեղկայի մէջ այդ չծնուած տիպարների ամենափոքրիկ նշմարները միայն։ Նա մարգարէի հոգւով նախատեսում է, թէ տարիներից, դուցէ դարերից յետոյ՝ որպէս այդ նշմարները նրանց առաջնեան գրուածքից կաճեն, կըզարգանան, կըկերպարանագործվեն և կատարեալ ձև ու կազմութիւն կըստանան, — և նրանց պատկերները կանխատես նկարում է և գնում իւր ժամանակի հասարակութեան առջև։ Ձշմարիտ բանաստեղծը գիտէ անցեալը, գիտէ ներկան, գիտէ և ապագան։ Ժամանակները նրա հետքերն են։ Իւր հերոսներից մէկի թերութիւնները նա լրացնում է միւսից առած յատկութիւններով, և ներկայացնում է երբեմն կատարելագործված տիպարները»...

Ես չեմ կարծում, որ մի բժշկապետ մարդ, ինչպիսին Ասլանն է, որ իւր ուսումը գործնական Ամերիկայումն է աւարտել, բանաստեղծութիւնը և բանաստեղծներին այնչափ բարձրացնէր, թէկուզ այդ բանաստեղծը լինէր մի Շէքսպիր։ Բժիշկները շատ լաւ գիտեն, որ բանաստեղծները, մանաւանդ գրչամոլ բանաստեղծները՝ մեծ մասամբ խելագար են լինում։ Ասլանի այս հայեացքը նոր չէ, դա հազար անգամ կրկնուած խելագարի մի զառանցանք է։

Այս մասին կարելի է երկար, շատ երկար ընդդիմախօսել, բայց այս կընդհանուկը գիտութեան և գեղարուեստի այրուբենը սովորեցնել ալ. Բաֆֆին, որ անշուշտ ինքն էլ գիտէ, որ չափազանցութիւն է իւր ասածը, դէրվիշի կարծիք է, ուրեմն և ներելի . . .

Այս է ահա իմ ստացած տպաւորութիւնը Կայծերի երկրորդ հատորից։ Եւ որովհետև իմ այս տպաւորութիւնը տալիս է «Այբուբեն» դաստիարակներին քաժնում, հարկաւոր եմ համարում մի քանի դաստիարակական նկատումներ ևս անել, և հարկէ, ոչ ալ. Բաֆֆուն խրատելու համար։

3.

Ամեն բանին պէտք է իւր նպատակն տալ։

Ամեն ինքնուրոյնութիւն խաչագողութիւն չէ։

Շատ մարդիկ կարող են հօթը մահացու մեղքերի տէր լինել, բայց խաչագող չլինել։

Ինչպէս կան տեղական հիւանդութիւններ, նոյնպէս կան և տեղական մոլութիւններ և առաքինութիւններ։ Մի տեղ կարող է Սալմաստումը տեղական լինել և ուրիշ տեղերում չըլսուած։ Եթէ զարթարաղցին խաչագողութիւն անէ, իսկոյն կըբռնուի, ինչպէս Մախար վարդապետը իւր «Գարթարաղի Դաղանիք»-ով։ Ոչ ոք կարող չէ տալ ուրիշին իւր չունեցածը, բայց և պէտք չէ ամեն միկից ընդունել տրամաբանել իւր ունեցածը։ Անասունն է անասունի նման, իսկ մարդիկ իրարից շատ տարբեր են։ Իմաստակին ազատ է իւր գրչով մի իմաստունի խելք վերլուծել, նրան խօսեցնել, բայց հետևանքն այն կըլինի, որ իմաստունն ևս դուրս կըգայ գրողի պէս մի իմաստակ։

Ատաւած, «որ ամենայն ինչ յոչընչէ արար», լոկ խօսքով միայն, մարդու ստեղծելու վրայ բաւական ժամանակ և աշխատանք գործ դրաւ, այն պատճառով էլ մարդը դուրս եկաւ մի շատ բազադրեալ արարած։ Մեծն և մարգարէս Մովսէս լաւ էր իմանում, որ մարդ ասածդ լոկ խօսքով ստեղծուելու պատուղ չէ։ Նա կարծես սրանով օրինակ առաւ բոլոր ստեղծակիներին, որ դգոյշ վարուին դէպի մարդիկ և նրանց բարկացուցիչ մասերը — նրանց մարմինը, նրանց միտքն ու հոգին լաւ ուսումնասիրեն, լաւ ծանօթանան մարդու մտքի ու հոգու արտադրութեան հետ, որպէս զի երբ խօսելու լինին անհատապետութեան, կրթութեան, գիտութեան, ուսման, Հարատութեան, գեղարուեստի, կրօնի, դիւանագիտութեան և այլ այս տեսակ բարձր բաների մասին, լաւ իմանան նրանց էութիւնը։

Պէտք է յարգել գեղարուեստի ամենատարրական օրէնքները, որ է հետևել Ճշմարտին, գեղեցկին և բարւոյն։ Վերջին երկուսին անծանօթը պէտք է գոնէ առաջինին հետևի, այն է՝ Ճշմարտին։ Շատ գրողներ կան, որոնք ոչ հանճար են և ոչ գիտնական, այլ միայն Ճշմարտին հետևող. նրանց

հաստատ գիտցածը գրում են ընորհքով, և դուրս է գալիս մի գեղեցիկ բան։ Այս է պատճառը, որ շատ անգամ չափաւորը կրթութիւն ստացած մարդիկ հիանալի բաներ են ստեղծում, իսկ նրանք, որոնք ձգտում ունին նրանց ուժից վեր մի բան ստեղծելու, այնպիսիները գործը կործանվում է անկանգնելի կերպով։

Տաղանդը մաշուելու չափութիւն ունի։ Բանաստիղծի հատակի այլևայլ ընջանում այլևայլ չև է ստանում նրա գրուածքը։ Ամեն ոտանաւոր բանաստեղծութիւն չէ և ոչ ամեն վէպ անուն կրող՝ վիպասանութիւն։ Տաղանդի գրուածքը չի նմանիլ «ուռկանի արկելոյ ի ծով և ամենայն ազգաց ժողովելոյ», որ ընթերցողը հարկադրուած լինի ընտրել գրածին և ի բաց ընկենուլ գնոտանին։ Ոչ, նա կրնամանի մի գործարանական ամբողջութեան, մի նկարչական ամբողջութեան, որից հեռ մի բան կտրես, արիւնաքամ կլլինի ամբողջը և կրմեռնի, կամ կեռևի խոյտն, որ նա մի վիրաւորը հսկայ է։ Մեծ հերոսութիւն է գրողի համար, երբ նա մի բան գրելիս աշխատում է իւր բոլոր գիտեցածն ու չգիտեցածը նրա մէջ տեղաւորել և սարդի ճարտարութեամբը մի ոստայն հիւսել։ Սարդը չքաշաք է օրինակ լինի բանաստեղծին, այլ՝ չերամն ու մեղուն . . .

Խորամանկութիւնը, թոյլն, ստրկի, գողի և մանաւանդ խաչազողի յատկութիւն է։ Խորամանկութիւնը հարուստ ընդունակութիւն չէ, այլ աղքատ, գրաւական ընդունակութիւն չէ, այլ բացատական. նա առողջ հոգու վիճակ չէ, այլ հիւանդ. այդ ընդունակութիւնը գործ է դրսում մինչև վնաս ընկերին և ոչ յօգուտ, այդ ընդունակութեամբ երբէք սուրբ գործ գործել կարելի չէ, այլ միշտ սիղծ։ Բարոյապէս ուժեղ մարդկիկը, ճշմարիտ առաքեալները, անկեղծ հայրենասէրները խորամանկ չեն լինում. նրանք գնում են ազնիւ ճանապարհով, անվեհերութեամբ, գնում են անձնազոհութեամբ, քաջի պէս, բայց ոչ խելառաբար։ Փաղչութիւն, խոհականութիւն, անձնանուիրութիւն — ահա այս յատկութիւններն ունեցող հերոսներն են, որոնց դիւցազնից կարգն է ձգում ժողովուրդը և պաշտում։ Ինչը նման կլլինէր Արիմեան Հայրիկը, եթէ խորամանկ լինէր։

Մենք մի առած ունինք, որ ասում է. «Կաթի հետ մատը գոռ հոգու հետ դուրս կրգայ»։ Փառասիրական ախտերն անբուժելի են ըստ մեծի մասին։ Բայց և այսպէս՝ ցեխը ցեխով չեն լուանալ, այլ ջրով։

Գ. ՍՂՈՅԵԱՆՑ

ԸՆԴԱՑԻՆ ՀԱԿՈՒՄՆԵՐԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գ.

Բնածին հակումները երբոր խումբն ունի կրօնական նշանակութիւն։ Կրօնական զգացումն երեխայի մէջ, աւելի ուշ է զարթնում, քան թէ միւս զգացումները։ Յայտնի է, որ մանկութեան առաջին շրջանում երեխաները կենդանական կեանքով են ապրում։ Բայց երբ սկսվում է ինքնաճանաչութեան շրջանը, այն ժամանակ նոցա հոգու մէջ ժողովվում են զանազան տպաւորութիւնները լրանց շրջապատող աշխարհից. ապա զարթնում է երեխայի մէջ հետաքրքրութեան զգացումն, և նա հարցնում է.—ո՞ր տեղից են այս բոլորը, ո՞րը, ինչպէս, ումնից են ինչու համար են։ Վերջապէս շարունակ դիտողութիւններով և երբեմն փորձառութեամբ երեխան այն եզրակացութեան է հասնում, թէ այդ բոլորը, ինչ որ ինքը տեսնում է, կախումն ունի մի աւելի բարձրագոյն և հզօր զօրութիւնից։ Այդ վայրկեանից ահա իսկապէս ծնվում է երեխայի հոգու մէջ կրօնական զգացումն և այդ զգացման առաջին արտայայտութիւնն է աղօթքը։

Մինչ լսվում է, որ թէ ընդարձակ զարգացումն, խորին և գրական գիտութիւնները թուլացնում են մարդուս հոգու մէջ նոցա կրօնական զգացումն, որպէս թէ ճշմարիտ բարեպաշտութիւնը յատուկ լինէը միմիայն տկար մտնոտկներին, և պառաւներին, որոնք ամենայն բանի հաւատալու դիւրահաւանութիւն ունին։ Այդ կարծիքն սխալ լինելը ապացուցանվում է սովորաբար մտաւոր գործունէութեան բնական ընթացքով, գիտական աշխատութիւնների և ուսումնական յայտնագործութիւնների անհրաժեշտ հետևանքներով։ Յայտնի է, որ բոլոր տպաւորութիւնների և դրական գիտութիւնների մտաւոր պաշարը մարդուս դրդում է դիմելու աւելի հեռաւոր հետախուզութիւնների. և այդ յաջորդական հետախուզութիւնները օգնում են նրան իր բարձրագոյն նպատակներին հասնելու, այն է՝ որոնել, գտնելու և իրօք ճանաչել առարկաները և երևոյթների մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնների սկզբնապատճառը։ Որքան մարդս աւելի է խորասուզվում առարկաների և երևոյթների էութեան մէջ, որքան աւելի է լմաստասիրում և զարգանում, այնքան և պառաւել զգալի են լինում նրան ստեղծագործութեան գաղտնիքները. գաղտնիք՝ որոնք երբէք ոչ ոքի քննութեան ենթակայ չեղան, գաղտնիք՝ որոց բացատրելը մարդկային խելքին մխանգամայն անմատչելի են և անճեռնահաս. այդ դէպքում ահա բարձրագոյն զարգացումն ունեցող մարդը սրտի գոհունակութեամբ խոստովանում

է մի անվաճառ զօրութիւն, մի Ամենաբարձրագոյն բանականութիւն, որից կախումն ունէ ամենայն էակ և որը շարժում կառավարում է բոլոր տիեզերքը ամենամեծ լմաստութեամբ։ Ուրեմն նոյն իսկ մտահայեցական գիտութեամբ և անհերքելի հետևողութեամբ, մարդս հասնում է Աստուածային գաղափարի ծանօթութեանը. և այդպիսով նրա հոգու մէջ հաստատուն հիմունքներով ամրանում է խորին և անկեղծ կրօնականութիւնը։ Այդ բանին վկայ են ամենամեծ լմաստասէրները։ Աշխարհահռչակ Նիւտոնը՝ որ անմահացել է իւր աստեղաբաշխական ու մաթեմատիկական լմաստասիրութեաբը, իւր բոլոր կեանքը, որ լի էր գիտնական երկասիրութիւններով՝ նմանեցնում էր մի աշխատաւէտ երկար Ճանապարհի, որ տանում էր նրան դէպի Ճշմարիտը. իսկ իւր գիտութիւնը նմանացնում էր ծովափնեայ վայլուն խեցեմորթներին և աւազահատերին մնայն. այն ինչ Ճշմարտութեան անսահման ու փայլուն ծովը համարում էր տակաւին իրանից հեռու, որը՝ անդադար հրապուրում էր դէպի լինքը յոգնած Ճանապարհորդին։ Մի այլ ականաւոր լմաստասէր՝ Բիկոն աւելի հաստատուն կերպով էր վկայում բարձր գիտութեան կրօնի հետ ունեցած յարաբերութեան մասին, իսկ կատարեալ գիտութիւնը մարդուն դարձնում է դէպի Աստուած։ Այդ նշանակում է հաւատը տատանում է մարդկանց մէջ ոչ թէ բարձր գիտնականութիւնից և խորին լուսաւորութիւնից, այլ ընդհակառակն տգիտութիւնից, թերուսումնութիւնից մտքի աղքատութիւնից և այլն։

Անցեալ դարերի պատմութիւնը, արդի ժամանակուայ Ճանապարհորդների զննութիւն ու գիտողութիւնները՝ միաբան վկայում են որ չեն եղած և չկան այժմս էլ ոչինչ է երկրում ժողովուրդ կամ ազգերը, որ առանց կրօնի լինէին, թէև նոյնիսկ վայրենի գրութեան մէջ։ Նիւթերից աստուածները շինող ֆիտիշներից սկսած, մինչև բրնութեան երևոյթներն ու զօրութիւնները աստուածացնող բազմաստուածականները, մինչև ամենայն լինչ աստուածացնող ամենաստուածեանները և մինչև Ճշմարիտ աստուածութիւնը խոստովանող միաստուածականները ապացոյց են կրօնական զգացման բնածին լինելուն։ Ուստի, ինչպէս որ մեր բոլոր հակումներն ու զգայումները, նոյնպէս և մեր կրօնական զգայումները ենթակայ լինելով զարգացման, պէտք է կրթուին մանկութեան օրից սկսած։ Կրօնական կրթութեան ամենալաւ և բնական դպրոցը, իհարկէ, պէտք է լինի ընտանիքը։ Ծնողները, որպէս երեխայն աւելի մօտիկ անձերը մանկան կրօնական հակումների ամենից լաւ կրթողը կարող էին լինել, եթէ որ իրանք էլ կրթուած լինէին։ Մանուկները չեն դատում. նոքա սնվում են միշտ կենդանի

տպաւորութիւնները, կրկնում են այն, ինչ որ լսում ու տեսնում են: Եթէ նոքա տեսնում են իրանց շուրջը կատարուող բարեպաշտական արարողութիւնները, քնքուշ ու քաղցր վարմունք, ամենքի հետ, մանաւանդ աղքատների և վշտացածների հետ, երբ լսում են բարի ու կարեկցական խօսակցութիւն, երբ ներկայ են գտնվում անկեղծ աղօթքների հանդիսաւոր արարողութիւնները, այն ժամանակ, բնական է որ նոքա ոչ միայն իւրացնէին քրիստոնէական կենցաղավարութեան սրտաքին կողմերը, այլ և կրթուէին քրիստոնէական զգացումներով: Այնուհետև նրանք ևս կվարուէին իրանց նմանների հետ քրիստոնէաբար. այն է՝ մարդասիրական ոգով: Բարեպաշտ ընտանիքի այդ բախտաւոր և բարի ազդեցութեան տակ՝ մանկան բնածին կրօնական հակումները զարգանում են նրա հոգւոյ մէջ կանոնաւոր ընթացքով և հետևաբար դառնում են բոլոր կեանքի մէջ նրա բարոյական դեկավարը: Միայն այդպիսի հանգամանքների տակ կարող է զարգանալ մարդուս մէջ ճշմարիտ բարոյական բնաւորութիւն, անանկեղծ կրօնական ոգի, որ զարգացած անձի մէջ արտայայտւում է նրանով, որ այդպիսի անձը՝ ոչ նման է այն անձերին, որոնք չափազանց նեղ սկրտ և անհամբերող լինելով, այլոց կրօնական համոզումների և գաւանութեան դէմ հալածանք են յարուցանում, որ և իրաւամբ կոչվում են կրօնամոլ, և ոչ էլ նման է այն թշուառականներին, որոնք առհասարակ իրանց դէպի կրօնն ունեցած սառնասրտութեան, կոպտութեան և անտարբերութեան համար՝ կոչվում են չէզոքներ, որոց աւելի լաւ էր անկրօն անուանել, որովհետև՝ ոչ մի կրօնի չեն պատկանում:

Ընտանիքից դուրս գալով երեխան՝ սկսում է յարաբերութիւն ունենալ իրան շրջապատող հասարակութեան հետ: Նա յաճախում է հասարակաց հիմնարկութիւնները, դպրոց, եկեղեցի, թատրոն: Նա մասնակցում է ընտանեկան ուրախութիւնների և տրտմութիւնների առիթ ժողովուած մերձաւորների և ծանօթների խումբերին: Այդ ամեն դէպքերում նրա հոգին ստանում է այս կամ այն տպաւորութիւնները՝ որոնք տալիս են նրա բնաւորութեան այս կամ այն ուղղութիւնը: Առայժմ՝ ոչ մեր ընտանեկան, ոչ ընկերական, ոչ հասարակական, ոչ դպրոցական և ոչ էլ որ և է հասարակաց հիմնարկութեան կեանքն ու ընթացքը չեն համապատասխանում այն պայմաններին, որք անշուշտ հարկաւոր են զարգացող սերունդի մէջ զգացումները ճշմարիտ կրօնական և բարոյական ուղղութեամբ կրթելու և հաստատուն բնաւորութիւն զարգացնելու այդ ուղղութեամբ:

Այս է պատճառը որ մեր երիտասարդութեան մէջ չենք տեսնում ճշմարիտ հաւատ, յոյս և սէր. չենք տեսնում վարք ու բարքի սրբութիւն: Վսեմ գաղափարների

անձնուիրութիւն, խօսքի և գործի մէջ ոգևորութիւն և այլն։

Հէնց որ մանկան լեզուն բացվում է, նա արդէն արտասանում է պիղծ հայհոյանքները՝ առանց գիտակցութեան և երբ հասկանում է հայհոյական բառերի բովանդակութիւնը՝ այնուհետև այն գաղափարների իրագործելուն է հետամուտ լինում և յաճախակի հասնում է իւր պիղծ ձգտումներին նպատակին։ Կարճ ասել, մեր դաւակները՝ իրանց չքնաղատես հանգամանքների տակ, մինչև դպրոց մտնելը՝ արդէն բարոյապէս հիւանդացած են լինում։

Ի զուր կը լինէր այնուհետև կատարեալ բժշկութիւն յուսալ մեր թէ ազգային և թէ հասարակական դպրոցներից, նախ այն պատճառաւ որ՝ մենք առ այժմ չունինք դաստիարակ ուսուցիչներ. երկրորդ՝ որովհետև մեր ընտանեկան և դպրոցական կեանքի մէջ չ'կայ ըստ ամենայնի համերաշխութիւն, չ'կայ մի և նոյն նպատակին հասնելու համար համաձայն և ներդաշնակ գործունէութիւն։ Դպրոցը պէտք է լինէր ընտանիքի օգնականը, սորա սկսածը նա պէտք է շարունակէր. ընդհակառակը՝ այժմ մեր ընտանիքը չի էլ կարողանում գէթ օգնական լինել դպրոցին։ Այն ամենը, ինչ որ երեխան տեսնում ու լսում է դպրոցում, միանգամայն նրա հակառակն է տեսնում ու լսում թէ ընտանիքում և թէ հասարակաց կեանքի մէջ։ Այդ պատճառաւ էս՝ երեխայի մէջ ոչ մի բարոյական սկզբունք չի հաստատվում. ուսուցչի հեղինակութիւնն ընկճվում է ընտանեկան և հասարակական կեանքի հեղինակութեան ներքոյ, ուստի և մեծ զանազանութիւն չի լինում անգրագէտ ծնողների և դպրոցական դասընթացն աւարտող երիտասարդ դաւակների բարոյական հայեցողութեան և բնաւորութեան մէջ։ Թող այս նկատումներից ուսուցիչը չըվհատի, Թող ամենայն ուսուցիչ բազմապատիկ իւր բարոյական ուժերն ու միջոցները. Թող աւելի քաջութեամբ մաքառի իւր դպրոցի ուղղութեան հակառակ գործող անբարոյական տարրերի դէմ. և յաղթանակ տանողը բարոյականութիւնը կըլինի վերջապէս։

Ս. ԲԷԳ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կիմանքի այս տարաժամ միջոցին միայն բանաստեղծը կարող էր յերես իր հարքորքոք սրտով խոսիլ Ճանապարհորդելու սահմանափակ մարդկանց միջ, որոնց յուսահատութիւնը կաշկանդել էր բանաստեղծի շունչը նրանց սեփական վեցերից, նրանք արհնացան, ո՞ պիտի որքան յարատև, և ցնծացին, խնդացին. ծիծաղ, երգ, կիրուխասում. ինչևիցէ այդ մի բարեգուշակ երևոյթ է անյոյս հիւանդների՝ մեր ժողովուրդի՝ կեանքում։

Բանաստեղծին լաւ պատիւներ արին Թիֆլիսում, ուր նրան Ճաշի միջոցին ասին մի պատկ և մի ընծայ—իր երգերը գեղեցիկ կազմով և ղարդարուն պահարանով, որը նա իր կողմից ղրկեց Ս. Էջմիածնայ Թանգարանին յիշատակ։

Մեծ հրճուանքով ընդունել են նրան նոյնպէս Կ. Պոլսում. շարունակ խնջոյքներ, մատուցումն ընծաների—մի արծաթէ Թանաքաման ոսկէ գրչով մի իւղանկարչ նկար՝ քանքարաւոր պայծառ նկարչէ Սրապիանից, որ պատկերացնում է զարկ մշկոյս տիպը։ Նա քախ է ունեցել երկրպագել Ներսէս Պատրիարքի շիրիմին և արցունք Թափել, որ իրատմը կրկամարուի ամբողջ ազգի արտասուքը։ Պ. Պատկանեանը տպագրում է իր Ճանապարհորդական խորհրդածութիւնները «Արձագանք»-ում, որից արտատպում է «Արևելք»-ը։

—

Օրերս ժամանեց Թիֆլիս Օրմանեան Տէր Մաղաքիա եպիսկոպոսը։ Նա կիրակի օգոստոսի 31-ին քարոզ ասաց Վանքում, ուր խռնուած էր շատ ժողովուրդ. քարոզից նա այդ օրը հատուկ մասին։ Մեր նախնիք, ասաց, աւելի վատ օրերում են եղել. մենք որ այժմ այսքան միջոցները և յարմարութիւնները ունինք յառաջադիմելու, պէտք չէ լքանել, այլ աշխատելու է յենուել հատուածին, որ հրաշքները կը գործէ. հաստատ, անկրկեայ հատատմաղթեց, որ լինի վշտակիր հայ ազգի ղօրավիգը։

Օրմանեան իր ուսումն աւարտել է Հռովմի պապական բարձր հոգևոր Ճեմարանում, աստուածաբանութեան, փիլիսոփայութեան և իրաւագիտութեան դոքտորի աստիճանով. այժմ հրատարակած է Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարան, իբրև աստուածաբանական դասատուի պատասխան։

—

Պրուքիէն և Մանուէլ վէպի բաժանորդագրին ստացանք.—Կարսից—Աստուածատուր Տէր-Յովհաննէսեանից՝ 1 օրինակի համար 2 ր. Ախալքալաքից—Յովհաննէս ք. Քաջալնուհուց—15 օր. 30 ր. Բագուից, պ. Մ. Մամիկոնեանից—10 օր. 20 ր.։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Բաֆֆուց իր Կայծերի ը. հատորը։ Ս. Պետերբուրգի հայ ուսանողների հրատարակութիւններից 1) Ուրիշի դերեզմանի վրայ առանց արտասուքի են լաց լինում. 2) Բուլղար աւազակապետ. 3) Ժաննա Դարք, Գաղիայի աղատող. 4) Նեղա, տասից պատմածը։ Հայր Կիւրեղ վ. Սրապիանից՝ Ողջախոհութիւն ուղիղ ճանապարհ առնելութեան։ Նշան Պէշիկթեանից իր հրատարակած վ. Չիւգօի Թշուառների դ. հատորը։ Գ. Կաֆեանից իր Թարգմանած Օր. Սիւզան Կօրնայլ երեխաները եւ նրանց բարեկամները։

Խ. Մալումեանից՝ Զինուորական կանոնադրութիւն Կովկասի համար։ Գր. Շահբազեանից՝ իր Թարգմանած Ոսկի բղէզ Էդգար Պօ-ի։ Մոսկուայի Հայ ուսանող. հրատ. Յովհ. Յովհաննիսեանից՝ Բանաստեղծութիւններ։ Մերզա Տէր-Սարգսեանից՝ Գէորգ Առեփէնսօն Վ. Օ. Գօրնիլի։ Ր. Ժ. Աբամեանից՝ Սալիանից էջմիածին, նկարագիր ուխտաւորի ուղեւորութեան։ Լիսից՝ Վէպ թէ պատմութիւն (Յարաբաղի անցեալը Աղբիս Իզիկազարեանի գրչէն տակ։) Սեմէն. Վեհապետեանից՝ Դուստուպ Վաղա, Նիբեցի։ Բշտակ Մեհրաբեան — Սբենգից՝ Երախայրիք Ա. գիրք, գաբուն։ Գր. Խալաթեանից՝ Ծրագիր հայ ազգագրութեան եւ ազգային իրաւաբանական սովորութիւնների։ Այս գրքերի մասին կը խօսենք «Աղբիւրի» առաջիկայ №№-ում։

Հայր Ղազարոս քահանայի «Քնարիկ Մանկական» ձայնագրուած երգարանը, ինչպէս լսում ենք, մեր ուսումնարանում ընդունուել է իբրև դասագիրք։ «Քնարիկի» գինը 2 ր. է։ «Աղբիւրի» բաժանորդները կարող են ձեռք բերել 1 ր. 20 կ., իսկ օտարա քաղաքացիները պէտք է աւելացնեն և 15 կ. մարկաները Հանձնարարած ախսի համար։ Նոյնպէս «Աղբիւրի» բաժանորդները կարող են սահմանել երեխաները եւ նրանց բարեկամները պատկերազարդ մանկական գեղեցիկ գիրքը 40 կոպէկով փոխանակ 50 կ.։ Յայտնում ենք Հայր Տէր-Ղազարոսին և երեխաները եւ նրանց բարեկամները գրքի պ. Թարգմանչին մեր շնորհակալութիւնը՝ «Աղբիւրի» բաժանորդներին այդ դիմումի համար։

«Աղբիւրի» խմբագիրը այս օրերս ուղեւորուելու է Ս. Հաչբգուղը, նրա բացակայութեան ժամանակ խմբագրի պաշտօնը վարելու է պ. Ղազարոս Աղայեանը։ «Աղբիւրի» խմբագրութիւնը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10½-ից մինչև ժամը 1-ը կէսօրից յետոյ, իսկ ուր և կէս գալիք օրերը ժամը 11-ից մինչև 12-ը։ Խմբագրութիւնը գտնուում է Բարխարնակայեա փողոցի վրայ, Աղիքսանդրեան այգու հանդէպ „Кавказъ“ և „Тиф. Листокъ„ Թերթի խմբագրութիւնների կից № 4 տանը։

Ռուսաց „Родникъ“ գեղեցիկ և օգտակար ամսագրի խմբագրութիւնը գոհունակութիւն և խրախոյս է տացել ժողովրդական Լուսաւորութեան Նախարարից և հրամայել է, որ ռուսաց բոլոր գպրոցները և ուսումնարանական գրադարանները տանեն այդ ամսագիրը։ Ցիրաւի „Родникъ“-ը հրատարակելում է շատ շքեղ Թէ նիրքերն և Թէ արտաքին կողմից

Շնորհակալութեամբ տացանք Միլանից պ. Կամիլ Բօնիկի երկու հատ Հայոց երգեր՝ 1) Souvenir d'Erzeroum (Յայնը հնչից էրզրումէն) 2) Souvenir de Kars (Այծեմնիկ) և 3) Souvenir d'Erivan (Ինչ քար սիրտ լինի) փոխադրած պիանօի համար։ Տէրոյեի վերնադիրն է „Chansons Arménienne“ և նուիրած է մեր աշխատակից պ. Կոստանդին Շահնազեին։ Ցանկացողները կարող են ձեռք բերել այս նոտաները խմբագրութեանս միջոցով։ Գինը հանդերձ ձանապարհածախսով 1 ր. 50 կ. է։

ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

«Աղբիւրի» խմբագրութիւնը համարում տպագրուած է լինում այն գրքոյկների ցանկը՝ հանդերձ նշանակուած գներով, որոնց մենք հրատարակել ենք եօթը տարուայ ընթացքում. սակայն այդ գրքերը դարձեալ մնում են զբաղուած մեծ քանակութեամբ խմբագրութեանս մէջ. այդ մանկական գրքոյկները մեծ մասամբ առաջնակարգ արժանաւոր իրանց բովանդակութեամբ, խնամքով ընտրած թարգմանուած, մաքուր, պատկերազարդ տպագրուած են, թէ՛ լինչ եղանդով և յոյսերով՝ այն չենք ասում. Ամեն կողմից լսելով պահանջները, ցանկութիւնները մանկական, ընթերցանութեան գրքեր ունենալու, մենք չխնայեցինք ոչինչ աշխատութիւն և միջոց մերովսանն կատարել մի պարտաւորութիւն, որ ունի ամեն հայ՝ մատաղ սերունդի վերաբերմամբ. Բայց հէնց որ գրքերը լոյս տեսան և հրատարակ դուրեցան, ամենքը դարձեալ խորասուզուեցան անտարբերութեան մէջ, Զարթուցիչ պահանջումը պահպանեցին, տիրեց ամենքին լռութիւն։ Քաղցր Ճառախօսները չտես կատեցան, ոչ ոք և ոչ իսկ մատը շարժեց մեր բեռը թեթևցնելու, աջակցելու համար վաճառել և տարածել այդ գրքերը։

Գաւառներում չկան գրավաճառանոցներ, ուստի գժուար են մեզանում առհասարակ գրքերը տարածվում։ Բայց հօ կան գաւառներում բազմաթիւ ուսուցիչներ, վարժուհիները, բարձրաձայն պահանջող ուսեալ երիտասարդները, որոնց անմիջական պարտքն է մանկական ընթերցանութեան մասին հոգալ. Ինչ են անում դրանք, երբ ամբարուած կան մանկական ընթերցանելի գրքոյկները, որոնք չեն տարածվում։ Եթէ կրթական գործին նուիրուած մարդիկ չեն մտածում և աշխատում մանկական լոյս տեսած գրքերը տարածելու, պարզ է, որ նրանք պարտապանց են գտնվում, ուրեմն նրանք հոգ չունին մանուկի մէջ ընթերցասիրութիւն վառելու, այն մանուկին, որ ապագայում պիտի պահպանէ մեր մեծ թերթերի գոյութիւնը, պիտի ծաղկեցնէ գրականութիւնը, գնելով մեծ գրքերը—հեղինակութիւնները, թարգմանութիւնները։ Բաւական չէ վարձկանի պէս պարտօն կատարել, գրագրանից մի երկու գիրք տալով աշակերտին կարդալու, դրանով բանը վերջացած համարել։ Պէտք է աշակերտներին և ծնողներին սովրեցնել գիրք գնել, սեպհական տնային գրադարանները կազմել։ Պարոններ, ձեր պարտքն է ընթերցասիրութեան սերմը ձգել և չդանդաղել ձեր պարտաւորութիւնները կատարելում. այնուհետև հեռացէք. սերմը կաճի և կըզօրանայ. Թող լինի սէր — ապահով ենք որ մենք մեր նպատակին կըհասնենք։

Սրանով դիմելով մանուկների բարեկամներին՝ հրատարակում ենք դարձեալ խմբագրութեանս մէջ եղած ընթերցանելի գրքերի ցուցակը, յայտնելով, որ պատուէրները ընդունում ենք նմանապէս և իւոստի մարկաներով. Ճանապարհածախսը մեզ վրայ՝ 5 ուրբլուց աւելի վաճառողը կրստանայ խմբագրութիւնից նուէր 1 րուբլու գրքեր։

—

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԱԽԱՂՅԽԱ Օր. Գ. Տ.-Խ. Հասցէն ուղղած է. 86 Թ. «Աղբիւր» № 1-ը ստացուած է:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՆՕՂ Ն. Դր. Պատմաւը, որ Ձեր հասցէն ուրիշ տեղ է փոխել:

ԱԽԱԼՔԱԼԱՔ Է. Տ.-Գր. Հասցէն փոխեցինք, պէտք է ուղարկէք հինգ հատ 7 կոպէկանոց մարկա:

ԹԷՆԵԻ Ա. Ն. / **ԼԷՅՊՅԻԿ Գ. Կ.** Ձեր երկուսի նամակները էլ ստացանք և հաւատում ենք Ձեզ, մի վրդովուեք, բնական է, որ հաղորդում էք թէ կատարեալ ղըպարտութիւն է:

ԴԱՆՉԱԿ Զ. Բ. Ստացել ենք Ձեր բանաստեղծութիւնները, բայց դեռ չենք կարդացել, կը կարդանք:

Ս. ԷԶՄԻԱՆԻՆ Է. Շատ հնօրհակալ ենք, հրաշալի է, խնդրում ենք շարունակել:

» » Ս. Մ. Ուրախութեամբ առաջիկայ №-ում կը տպագրենք, գտնում ենք, որ արդէն ուշ է ներկայ №-ից սկսել տպագրութիւնը:

» » Վ. Վ. Տ.-Գ. Վաղուց գրել ենք և խնդրել չորս օրինակ ուղարկել, սպասելուց Ձեզ կը կասկնենք:

ՇՈՒՇԻ Ա. Գ. Յոյս ունենք, Ձեր այգաթղթ ստացած և մեզ ուղարկած նամակը պ. Ա. Բ. ցոյց առած կը լինէք:

ԲԱԳՈՒ Ս. Ս. Ստացանք. կը կարդանք, հնօրհակալ ենք: Ոչ, աշխատակցում է և այժմ բայց նկատելի առաւութիւնը արդէլք են լինում յաճախ տպագրելու:

ՏՐԱՊԻԶՕՆ Է. Գ. եպ Սր. Սրբազան Հայր, սպասում ենք. Համաձայն Ձեր խոստման՝ յիշեցնում ենք:

Կ. ՊՕԼԻՍ «Բուբ. Ման.» խմբ. Ստացել ենք Ձեր նամակները, ուղարկեցինք պատձէնը, շատ հնօրհակալ կըլինենք, որ աշխատէք մեր կողմից:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Сентября 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2